

Դպրոցական ֆոնդը տնօրեններին հարստացնելու միջոց է, պետք է վերացնել.

«Երկիր Ծիրանի» ավագանու թեկնածու

Հայաստանի հանրակրթական ծրագրերը բավականին բարդ են և անհասկանալի. աշակերտը հաճախ նյութը չի հասկանում և դիմում է ծնողներին, ծնողն էլ, բան չհասկանալով, վարձում է կրկնուսույց, Aysor.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց «Երկիր Ծիրանի» կողմից առաջադրված ավագանու թեկնածու Լիլիա Դիլանյանը: Նշենք, որ «Երկիր Ծիրանին» իր ծրագրով նախատեսում է կրթական համակարգում եղած մեթոդներում և ծրագրերում կատարել զգալի փոփոխություններ:

Նրա խոսքով՝ իրենց կուսակցությունում կան մանկավարժներ և մեթոդիստներ, ովքեր ի վիճակի են փոփոխելու դասավանդման մոտեցումները՝ չդարձնելով դրանք պրիմիտիվ:

Անդրադառնալով նախընտրական ծրագրի այն կետին, համաձայն որի՝ տարեկան մի քանի անգամ պետք է կազմակերպել դպրոցականների այցելություն տեսարժան ու պատմական վայրեր, նա նշեց, որ իրենք ուսումնասիրել են այդ հարցը, հաշվարկել, և, կարծում են, որ քաղաքի բյուջեն, ճիշտ ծախսելու և կազմակերպելու պարագայում, հնարավոր է հատկացնել նախատեսված գումարը:

«Ասեմ, որ դա մեծ ծախսեր չի պահանջում, միակ ծախսը ճանապարհածախսն է, հաշվարկեք և տեսեք, որ դա այդպես է, ուղղակի բյուջեն պետք է ճիշտ ծախսել և չվատնել», - ընդգծեց նա:

Հարցին՝ ինչու՞ են իրենց ծրագրում դեմ արտահայտվել դպրոցական ֆոնդ հասկացությանը և նշել, որ պետք է դա ի սպառ վերացնել, նա պատասխանեց.

«Քաղաքապետարանն ամեն ինչով պետք է ապահովի դպրոցներին և մանկապարտեզներին: Ի՞նչ է նշանակում դպրոցական ֆոնդ: Դա տնօրեններին հարստացնելու միջոց է, ինչը պետք է վերացնել»:

Մեկ այլ դրույթի համաձայն, նախատեսվում է դաստիարակների ու դայակների համար ստեղծել նոր աշխատատեղեր, ինչի շնորհիվ պետք է վերացվեն կոռուպցիոն ռիսկեր պարունակող հերթագրումները:

Լիլիա Դիլանյանն այս կետը մեկնաբանեց այսպես, որ կարելի է օգտագործել մասնագետների փորձը լրացուցիչ, այսինքն՝ ավելի փորձառուները կարող են վերապատրաստել երիտասարդ կադրերին կամ էքսկուրսիաների ժամանակ լինել զբոսավար, հայրենասիրության, հայ ճարտարապետության թեմաներով դասախոսություն կարդալ և ստանալ լրացուցիչ գումար:

«Դա փող վաստակելու ավելի ցիվիլ տարբերակ է», - հավելեց նա:

Հեղինակ՝ Անահիտ Լալայան

05.05.2017 14:20

Նյութի աղբյուրը՝ www.aysor.am

<http://www.aysor.am/am/news/2017/05/05/%C2%AB%D4%B5%D6%80%D5%AF%D5%AB%D6%80-%D4%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB%C2%BB-%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80/1255861>